

Ահա՛ Մկոն սկսաւ ճանչնալ իր գիւղի շրջակայքը, ազրիւրը, այգիները, արտերը, փոքրիկ բլուրը ո՛հ, հինջ քաղցր կեռալով իր մանկութիւնը, երիտասարդութիւնը կը պատմէին, սակայն անոնք ներկայէն ալ կը խօսնան ներկայէն. Մկոն չը լսեց, չուզեց լսել ու յառաջացաւ արագ արագ Բայց ո՛ր է գիւղը, ո՛ր է իր անակը, անա իրեն ծանօթ ազրիւրը, ծառերը, բլուրը, բայց գիւղը չկայ, գիւղը չերեւար իր փոքրիկ գեղեցիկ եկեղեցիով, դետնի հաւասար աւերակներ միայն կը տեսնուին: Աստուած իմ ո՛ր է տունս, հայրս, մայրս, զաւակս կըսէր խեղճ Մկո, երբ արդէն աւերակներու մէջ կը գտնուէր: Այս էր միթէ իր երտգած երջանկութեան բոյնը, երեւակայած խի՞ման գիւղերը, սպասած ուրախ օրը, իր փնտռած հայրենի օձախին տեղ փլատակներ միայն կը տեսնէր, կարմիր հաւկիթի փոխարէն սիւրբիներու և հայրենակիցներու արիւնով ներկուած աւերակներ միայն կը գտնէր, «Բրիտանոս յարիւ՛ս» ուրախ ձայնին փոխարէն կը լսուէին, սուր, սարսաղեցիկ կատաչները՝ սեւ, գիշատիչ թռչուններուն, որոնք աւերակէ աւերակ, գիւղէ գիւղ կերթալին յափրնալու համար մարդու, հայ մարդու միտով որ այնքան առատ էր այն տարին այդ զուլումի երկրին մէջ:

Երեւի անծնած է այս երկիրը, ուրախութիւնը իսպառ վտարուած է այս վայրերէն, խինդն ու ծիծաղը գոյութիւն պիտի չունենան հոս, կը մտածէր Մկո, բայց ո՛ր անգութ էակը այսքան արիւն, այսքան արցունք կապած է այս դժբաղդ երկրին հետ:

Ամբողջ գիւղերը կարտասուէր Մկո, իր ցաւերը կը պատմէր աւերակներուն, գիշատիչ թռչուններուն և երկնքի աստղերուն որոնք խումբ խումբ ժողովուած, նոյն անտարբերութեամբ կարծես, իրեն և հեռաւոր, երջանիկ երկրներու մէջ ուրախացողներու կը նայէին:

Աւերակներու մէջ դեռ կը հեծէր Մկո, երբ արեւը սողորականին պէս և իր բոլոր շքեղութեամբ ծագեցաւ, գիւղէն դուրս, բնուիլները առաւօտեան այն պահուն խեղճ նմանքին սրտին ու մտքին հակապատկերն էր: Երկու թուրք ճամբորդ յանկարծ երեւցան ու եկան նստեցան ազրիւրին մօտ: Ուրախ էին ու բարձր կը խօսէին, իրենց բիրտ ձայնով աւերակներու տակ պատկած գիւղերը ու միակ կենդանի էակը Մկոն կանանց ասացնէին, Երկու աստիճաններու զարմանքը մեծ եղաւ երբ փլատակներու մէջ, իրենց մօտ կանգնած տեսան ուրուական մը որ գունատ ու նիհար, աչքերը խոշոր բացած անթարթ իրենց կը նայէր: Չէին նկատած թէ ի՞նչպէս աննշմարելի կերպով մինչև իրենց հասած էր շարժելու հազիւ կարողութիւն ունեցող այդ մարդը, չէին կռահած թէ ի՞նչպէս առած էր իրենց քով գետնի վրայ դրուած կարգաւոր, բայց վայրկեանապէս ամէն բան հասկցան, կամաքանման մարդը յանկարծ բռնեց իրենց մէջ կոկորդը, թուրք ուժգին իրենց կարծքը և սքանչացած հոսող արիւնէն սկսաւ ձեռները վէրքին մէջ խոթել, արիւնով լուալ ու խելադարի պէս քրքրելով գոչել, օրեր, կնիկ, բեր հաւկիթները, արիւնով կարմիր արիւնով ներկենք, ալ ասկէ ետք ասանկ ներկուած հա-

կիթներ միայն կրնամ ուտել...»
Տակաւին կը շարունակէր խօսել, բոլոր հայերը յորդորել որ արիւնով թուրքի արիւնով ներկեն Չատիկ հաւկիթները, երբ խախտալով շունչը փչող զազանին ընկերը լռեցուց զինքը իր սուր երկայն դաշուով:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

... Խմբագիր «Շարժում» ներկայ նամակս ընդօրինակուած է Հայրենիքէն եկած նամակէ մը, կը խնդրուի որ բարեհաճիք նոյնութեամբ հրատարակել «Շարժում» մատակայ թիւերէն մէկուն մէջ, ինչպէս որ մենք նոյնութեամբ ընդօրինակած ենք բնագրէն:

Հաւազատպ
Սուլինա 3 ապրիլ 1903

Միրելի եղբայր իմ,

Մեզ նամած է 17 նոյեմբ. 1902 թուակիր նամակդ. և զրկածդ «Պատմութիւն» Ա. Հ. ի միջոցաւ սմբողջապէս գանձեցինք. այդ մասին անհոգ եղիր: Բայց չեմ գիտեր այս վարայով ի՞նչ կարիքներս հոգանք, չը հասկնամ գրածներս գանգատ. ոչ երբէք, ինչպէս որ միշտ ըսած ենք հիմայ ալ կըսենք Աստուած քու թեւերուն զբարքաթմ տայ որ միշտ մեզ կ'օգնեն. բայց գիտես, սիրելի եղբայր, որ այլ եւս վարայ խէր չանէր, երբ տիրող իշխանութիւնն է անօթի՝ մենք ի՞նչպէս կարող ենք ապրել: Երբ նամակդ ու շացաւ եղներից մէկը ծախեցին մնաց 3 ել. յի՞մ այնպիսի պարագայի մը մէջ ենք որ Էստուած ինքն ողորմի և մեզ ազատէ այս դառն կացութիւնից, ալ չեմ գիտեր ի՞նչ կերպով բացատրեմ մեր քաջածնելը. 6 տարի առաջ երբ կարճկան գաւառ բոլորովին հոյճաբակ ելաւ գիւղերիս մէջ մտրդ չը մնաց պատժի ալից. իսկ այսօրուան քաջածնին այն օրից աւելի գէշ է: Իկարագրեմ մեր ներկայ կացութիւնը:

Կառավարութիւն աննախատ կերպով պահանջում է կարճկան գաւառից 300000 դուրուշ (60000 ֆր.) գումար մը «պակիթ» այս գումարից մէր գիւղէն կուզուի 15000 դուրուշ. «թխասխալտար» ներս ամէն գիւղի մէջ նսած են, խեղճ դիւղացիներ անպատմելի տանջանքներու մատնուած են «թխասխալտար» կը ժողովեն, ամեն անգամին 1000-1500 դուրուշ պէտք է լինի. (6) վեց օր անգամ մը փարայ «թխասխալտար» կանեն: Կարծեմ առանց մեր գրելուն ալ դուք կարող էք երեւակայել թէ ի՞նչ են գործում այս հրէշներ, այս վայրենի ու անօթի գայլեր: Կաղաչեմ որ գրածներս տեղեկացուեն մեր գիւղացոց ինչպէս նաև մեր հայրենակիցներուն որպէսզի փութան օգնութեան ձեռք կարկուտել մեզ թշ-

ուառներուս, եթէ ոչ մեր կորուստ մտաւրուտ է:

Աստուծոյ սիրուն եղնի, ի՞նչ որ կանէք Աստուծուն կանէք, շուտով մեր վրայ հարցուցէք. և զմեզ այս բարբարոսներուց ազատէք: Աշխատէ ի վեր է արեւ ու լուս չենք տեսեր, ամէն օր շարաչար տանջանքներ ու ձեծ: Եղած չեղածնիս կը ծախեն կը տանին. եթէ որ այս տեսակ շարունակուի՝ գարնանս կարող չենք երբէք ել լծել. վար ու ցանք անել. այսքան խմանք:

Միրելիք, մեր ինչ վիշտ որ կայ՝ թողեր ենք. այս ծանր տուրքերի տարտ չենք կրնար քաղեր: Երբէն կը կրկնեմ փարայ խէր չանէր քանի որ կեանք ու պատիւ չ'մնաց: Մայրերնիս ողջ է ճակատող կը համարուէ պղտիկներով և բոլոր ազգականներով քեզ կը բարեկենք:

Մնամ Եղբայրդ

25 Յունուար 1903
Կարճկան (.....) գիւղ

Վառնա 9 ապրիլ 1903

Ս. Չատիկին երկրորդ օրը՝ տեղ ոյս եկեղեցւոյն մէջ հանդիսատես եղանք տէր-պապայական նոր գովեստի մըն ալ, Մեր արժանապատիւ տէր Մ. Ը այս անգամ նորեկու է բան մըն ալ աւելցուց իր այլանդակ վարք ու բարքին վրայ, Երկու ձեռքերը մէյնէկ պնակ-մէկն աղքատաց և միւսը մէն յետընդի պնակը մանաւանդ միշտ ժողովրդին առջև քշելով և ամենուն ծիծաղը կը շարժէ, աղօթքը խանգարելով:

Մեր կղերը կարծես ժողովուրդը եկեղեցիէն պաղեցնելու համար նուրբութիւններ հնարելու հոտեւէ է միշտ, իրեն համար կարեւորութիւն ունեցող միայն իր գրպանի շահն է, ուրիշ ոչինչ, եկեղեցի իր խանութի է կարծես:

Յաճախ դառն յանդիմանութիւններ կը լուռին բեմէն:

— Ժողովուրդ, եկեղեցի չէ՞ք գար: Բայց ինչու գանք, մեղք՞ մտնալու, այլանդակ տեսարաններու ներկայ գտնուելու: Եթէ կուզէք որ եկեղեցի գանք յայդեցէք մեր Ս. եկեղեցիին օրէնքները: Գոյափոխութիւնէն վերջը երբէք ներքին չէ ստակ ժողովուրդ համար պնակ պտտցնել: Ատիկայ խստիւ արգիւրուած է՝ նկատելով որ հաւատացեալներուն ջերմեռանդութիւնը պիտի խանգարուէր ատով, եւ հոս մէկը չբարեւ, երկու պնակ կը պտտցնեն:

Քանի քանի անգամներ սա բանին համար ալ դիտողութիւն եղաւ թէ սողուններ ժամանակ հարկ չկայ որ քահանան յիմարանցէն փախած խնդիր մը պէս մէյ մը ասդին վազէ մէյ մը անդին ճիղջոյն տուք միմեանց, սողունն տու՛ք միմեանց մտածալով:

Չեմ գիտեր թէ ո՞ր մէկ անկարգութիւնը յիշեմ հոս: Եկեղեցի մը ունինք որ դպրապետ չունի, շարա-

կան կարգացող չունի: Ս. Աւետարանի չէնք-չնորքը ընթերցում մը չկայ, մարդարէից գիրքերու ընթերցում չկայ, մեղեցի ըսող չկայ, ան չկայ, աս չկայ:

Եթէ Արթ. ակը-Մարտիրոս հօր սորօնեն զայնստիկը պ. Ռո. բէնին տէր գի բազումը լամ չես, ամեն ասեմ քեզ, համով հոտով բան մը լսած չունիս: Քանի՛ անգամներ դիտողութիւն եղաւ, բայց ի՞նչ պատասխանուեցաւ:

— Ուզողը թող մտիկ ընէ:
Կարգ մը ինքնակող երիտասարդներ շարուած են դասին մէջ ու կը խոխոտան թէ զպիւր են, մինչդեռ իրենցմէն հազիւ 2-3 հոգի միայն կրնան ընտրել չէնքով շնորհքով կարողացող. միւսները սակայն կարեն ամբողջը. ամէն մարդ իր եղանակով կերգէ: Աս հիմնադրէն է, աս անհիւսշրան, աս անհիւ ետեսան: Ու կուրգինն պատնելու աստիճան կը պօսան ու կը կանչուրուտեն: Պահ մը ինքզինքը հրդեհի մը վայրը պիտի կարծէիր: Ալ չեմ գիտեր թէ ստար մը լեթէ ներս մտնէր մեր եկեղեցիէն ի՞նչ պիտի մտածէր:

Պիր Էփեմեմիսիւրուն խօսել խընդախնէրը, կոշտ շարժում: Երն ալ գատուած իս ապացոյց մըն ալ՝ Չատիկ աստուան խալիճի Միրելին աւագ սարկուազութեան պաշտօնը:

Չորն ասեմ կամ զորն խոստովանիմ:

Ժողովուրդը խուռներամ Ս. հաղորդութեան կը մասնակցի և ըսող մը չկայ իրենց որ սպասեն մինչև քահանան «Կեցո տէր» ըսէ, շատանգամ ըողորմեցին ըսելու ժամանակը յանկարծ պնակ ու կեղիւյն մէջտեղ: ու եղած է որ քահանան վերնատունը գտնուելով տիրացուն մէկը «Կեցոյ» ըսել կուտայ ժողովուրդին: Անոնք պարագայէս անհանդուրժելի բաներ են: Բայց չեմ գիտեր թէ որո՞ւ հասկցնելու է:

Հարցնող փնտռող չկայ թէ Ս. հաղորդութեան մասնակցող ամեն մարդ արժանի է անոր, եւ անհնաշի միւսը մը կը ճանչնամ հոս: Վատնայի մէջ, որ ուրիշ մը իրաւունքը յախապէս կը գտնուի մէջտեղ երկուսը բուռ և եկեղեցւոյ մէջ Ս. խորանին ու յետոյ քահանային ուղե խօսք տուաւ որ պիտի վճարէ ամբողջովին իր պարտքը թէեւ երգում բրած էր թէ պարտք չունի: Եւ աս անամօթ միւսին ասանց ասնարիւ մը վճարելու քանի անգամներ խոստովանեցաւ ու հաղորդուեցաւ:

Եւ քահանան հարկ չը համարեց նոյն իսկ յիշեցնել իրեն գոնէ 0% նոս Ոսկեբերանին սա նըզվոր. «Ե որ լրբինի երեսով կամ անարժանութեամբ հաղորդի՛ մասն Յուդայի խաչահանաց», գող աւագակացն զասի գասակից եղեցի:

ԵԿԵՂԵՑԱՒ ՄԸ

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համբերութիւնն ալ իր չափը ունի: Թոյլ չպիտի տայինք մենք մեզի հերպապարակ իջնել և խօսել այն ինչ կածներու մասին, որոնց ճակտին յիւստիտական պատմութիւնը շատեց արդէն քսեց դասապարտութեան սեւ մուրը: Չպիտի զիջանէինք վայրկեան մը իսկ զբաղիլ այն թափփփուքներով, որոնք մեւսած են մեզի

համար իսկապէս : Բայց միանգամ
ընդ միշտ վերջ ապառ համար հասարակ
ընկերութեան անհատական օրհասական
ընկերութեան անհատական օրհասական

Ձիթեան մը, արտաքսուած կու-
սակցութեան, բնական է որ իր
բուն գերին մէջ պիտի ըլլար հիմայ
զինտիտի, ձեռքերը խառնած աչ-
քերը դիպի յիսուս : Արգահատա՞ք
այդ ինկածին : — Այ, ի՞նչ ինքը
խօսի . . . կուսակցութեան հարգաս
և զերգոյն շահերուն, եւ անխու-
սափելիին առջեւ խոնարհելով Շահ-
երած եւ պ. պ. Արգահատ, Շահ-
բիման եւ վահրամ որ կուսակցու-
թեան գործերու ղեկավարութիւնը

ստանձնեն ու վարեն զայն մինչեւ
ընդ. ժողովը : (Շրջաբերական Ձիթ
ձեռնի, 1902 հ. 4. 26 Լծոտն) : Հե-
տեւորք կը խոտովանի մարդուը
թէ կեղծ կեղծուն թիւիւր իրաւունք
ինք տուած է (թէի, բարձրած) :
անդառնալի կերպով կերպ. վարչու-
թեանն իրաւունք Շահբիման եւ ին-
կերներուն : (Այդ հրաժարականի պա-
հուն զեւ Արգահատեանն իրաւունքին
գիւտը չէր եղած, ու դեռ կարգ մը
սխմարներ կեղծունի երկպառակու-
թիւնը այդ նամակին կը վերագրեն)

մինչդեռ Քիչ մը դատողութիւն խո-
րագրով իր յօդուածին մէջ հին կեղ-
րուն կը կոչէ «ինքնակոչ» առանց
քիչ մը դատողութիւն ունենալու թէ
նոյն ինքն է ինքնակոչը հեղինակը
— Շահբիման ինքնակոչ կեղծունի :
Ուրի տեղ մը (շրջաբերական, 1903
յուշար 1 Ձիթիկ) պատուելին—
անուշտ միշտ աչքերը դէպի Յիսուս
— արհամարհելով ամէն սպասուելիք
ու պատիժ կը գոչէ . . . «Ի՞նչ այդ-
պէս ըլլայ եթէ երբէք իմ մէջս գո-
յութիւն ունի բաժանուածի դատա-
պարտելի ողբն» (զու սասցիր պատ-
ուելի) . . . եւ ոչեւոր սելով կը շարու-
նակէ, «Ո՞վ ինձմէ սուղի միտութեան
սիրտնոր եղած է, ո՞վ ինձմէ աւելի
պատճառ եղած է կատարուած միտ-
ութեան (այո, պատճառ կեղծ-միտու-
թեան եւ անոր կանխորոշ քայքա-
յումին) . . . Պարզ է ուրեմն որ կրօն-
քի այս եղական վաճառականը իր
յեղափոխական միտան ինչ կերպով
կատարեց եւ ինչպէս կը կատարէ
պատճ. . . փաթտուելով իրաւունքի
իրաւասեաց խմբագրին, անոր թղթէ
հովանիին տակ զտած ըլլալ կարծե-
լով անառիկ կայան մը, կը ճգնի իր
սխալները ուղղել . . . ազգայնաբու-
թեանը կատարած աչքերով Յիսուսին,
զրպանով տուարին . . . չիթուեցով մի-
տութեան : — Ողորմելի կայան, Չպիտի
զիջանէիք ըսկ տող մը նուիրել ա-
նոր . . . Միջանկեակ ըսնիք թէ ճշմար-
տութեանը, ճարտաէր տոչորուող իմ
բազիրը լաւ կընէր եթէ քիչ մը իր
խելագատական արտադրութիւնը իր
թղթէ միտաւունքին կշիռովը չափե-
լու տեղ ճշմարտութեան ու բուն ի-
րաւունքի կշիռին յանձնէր զանոնք
ու . . . այնպէս հրամայէր հասարակու-
թեան : Բայց քանի որ ցու է ըսել
չպիտի կրնայ ան երբէք ճշմարտու-
թիւնն ու իրաւունքը սիրել, ուրեմն
ընթերցող հասարակութեան կը թո-
ղունք զազափար կազմել այդ ներ-
շնչուող խմբագրի մզլուտ արտադրու-
թիւններուն վրայ, որոնց աղբիւրը
. . . զժողովարար պարզուեցաւ ար-

դէն արեւ անաքուր է : Ինչ կեր-
պով պիտի չափէ հասարակութիւնը
արժէքը այդ արտադրութիւններուն :
Շատ պարզ է, Քիչ մը դատողութիւն
եւ ան կը մտնուին իրերը այնպէս,
ինչպէս որ են իրերը իսկականի մէջ :
Ուրախ ենք որ շրջաբերական անխու-
հեմութիւնը ունեցաւ — պատիւ ան-
չուշտ բեմասացներու զոյգին — հրա-
տարակիւ Արգահատեանն զարագ-
բական, նամակը, որով պարզուե-
ցաւ ակնյայտի թէ Պոլսէի Ձիթ-
ձիթ-Ուշարական նորակառոյց ետ-
տանի-դաշնակցութեան (նմանն զնր-
մանն սիրէ) ակնկալած զայրոյթն ու
զզուանքը ազդելու բնոյթին շատ հե-
տու է եղեր ան, այսինքն ազաւազ-
բական նամակը : Եթէ այդ նամա-
կի մէջ ինչպէս նազարէկի հիւ-
թականին բրպականի է եղած (մի-
թէ այդ կը նշանակէ կեղծունի բե-
րել զայն), ուղղմանին, ալ ուր մը-
նացին ձեռ կուտողները, չէ որ նա
զարգէկը սակիններու մէջ կը լողար . . .

Ո՞րք, ո՞ր գործիչը (կեղծերուն հա-
մար է մեր խօսքը) նիթական այդ-
պիտի աննպաստ գրութեան մը մէջ
ինկած է, Բարգասութեան իսկ չենք
գներ : Թղթաւորեցք պատուութիւնը :
Մեծ գործիչներուն վարձքը . . . ա՛յն է
եղած միշտ : Ենթադրեմք պահ մը որ
Արգահատեանն կամ ուրիշ մը նոյն
իսկ ոճիւրը գործէին նազարէ-
կին համար «սթոն» պատրաստելու :
Ինչ, կը կարծէի՞ք որ չի փոխանու-
կէինք ան տասնեակ Շահբիմաններու
Արգահատներու, Ձիթեաններու հետ :
(Միտութեան քաղաքացիութիւններուն
մէջ հին նշանակութեան Աւետիս
նազարէկի մասին ըրած զձեռքու-
թիւնը բացորոշ է, ու ունեւ նմա-
րին միւս կողմը վերականգնելու
յատկապէս Արգահատի անունը զետե-
ղած էին, չնայելով որ փտարած է-
ին զայն իրենց մէջէն . . . բայց հարկ
չիկայ մեկնել : Կէ որ անոր արի-
նէն պատուաւորուած էին իրենք,
մինչդեռ . . . նազարէկը կրնար միշտ
իրը դատողութեան սուրճ գիրինք ան-
հանգիստ գրութեան մէջ պահել) : Ե-
թէ այսօր իսկ նազարէկ յանձն առ-
նէ գործել կուսակցութեան շարքե-
րուն մէջ, ամենայն սիրով պիտի
թափանցէ իսկ այն խոր համո-
զումով որ այդ թղթ կեղծունի արհա-
մարտուած Մեծ-մարդը իսկապէս յե-
ղափոխական է եղած, յեղափոխ-
կան կեանք մը ապրած (թէեւ քա-
ցառարար . . . իրաւով եւ ոչ սթէյ-
քով) եւ շատ, շատ աւելի քարձր
քան այն թղթեկները, որոնք . . . դա-
ւաճան, մասնագի, հակաեղափոխ-
կան, խաչագիւղ եւն մակդիրներով
ալ պատուելու են : Ո՞վ պիտի յան-
դգնի ատենցով մէկը վերագրել Աւե-
տիսին, թող աստիքը գայ . . . Յեղա-
փոխութեան ամուլ չըլլանք արդէն
ցոյց տուաւ թէ որոնք են փճացած-
ները եւ ինկածները, որոնց համար
պատուութեան սեւ դատակնիքին հետ
մեր ալ արհամարհանքը եւ թո՞քը,
ուրիշ ոչ ինչ :

Անցնալը յարտոյով
Թէ ինչ է ՍՈՑԻԱԿԱՆ
ՅԵՂԱՓՈՒՄԻՒՆԻՒՄԻ
Պ.

Այսպէս 1789ին Յարանայի մէջ տե-
ղի ունեցաւ մեծ ոստում մը, քա-
նակի որակի փոխարկում, զարգաց-
ման ընդհատում, յեղափոխութիւն :

Երբոր տիրական ուժը ազնուականու-
թեան ու աւատականութեան ձեռ-
քէն պորժուագրայի ձեռքը անցաւ :
Նայնր եղաւ եւրոպական ուրիշ եր-
կրներու մէջ ալ : Գերմանիա, Բրու-
սիա, Աւստրիա, Հոլանտա, Անգ-
ղիա (խաղաղ յեղափոխութիւն), Ի-
տալիա, Սպանիա, Պուրկարիա եւն :

Ակներեւ է ուրեմն թէ յեղափո-
խութիւնները անհրաժեշտ վարկեան-
ներ են բարձր բրոցէսին եւ յատուկ
են թէ բնութեան, թէ հասարակու-
թեան :

Ի՞նչ իր մարդկային քաղաքա-
յի պատմութիւն գրուած թին մէջ,
երբոր կը խօսի բնական երեւոյթ-
ներու օրինահամակերպման մասին,
կրտէ, «մեծ փոփոխութիւններու ան-
յազթ նշաններու այսքան շատու-
թեան առջեւ ինքնաբերաբար կը յան-
գինք այս եզրակացութեան . . . որքան
հակայական ըլլաւ են տագնապները,
որ այսպիսի արդիւնք տուած են,»
Մեկի ծանօթ զանազան երեւոյթները
ինչպէս . . . երկարաժամ հարաբերու-
րունկուժը եւ ուրականները կարծես
մեզի կը յիշեցնեն այն տագնապները
որոնք յանկարծական կերպով ոչնչա-
ցուցած են գոյութիւն ունեցող օր-
կանիւրները եւ անոնց տեղ ուրիշ
նոր, արդի օրկանիւրներ կանչուած
են . . .

Մենք առաջ պիտի բերենք դեռ
քանի մը փաստեր կրկին անգամ
ցուցնելու թէ յեղափոխութիւնը սո-
սիալական գարգացման ընդհատում
է, ոստում յանկարծական փոխա-
րկում մէկ կացութեան կամ վիճակէ
մը ուրիշ կացութեան կամ վիճակ :
Արեւոյ կեանքը, կրտէ մեծ մարդ
մը, գործարանաւոր նիթի շարժման
երեւոյթներու անտահման շղթայ մը,
որ միշտ կապուած է ձեռքին համա-
պատասխան փոփոխութիւններու հետ :
Եւ իրօք այսպէս է, Ասոր վրայ խո-
րապէս կը համոզուինք այն կենդա-
նիւրեւ սողմարանութեանն, որոնք
ձեռափոխումը (մէթաֆորօզ) կը զար-
գանան, զոր օր. միջատներէն մէկ
քանիներ (Տիբոլէրա, Լէրտօրգէրա
եւն), Յայտնի է թէ ձեռափոխումը
կըլլայ կատարեալ ու անկատար :
(Այս օրինակը կը քաղենք «Ձարիա»
հանդէսին մէջ տպագրուած Կ. Ռէլ-
խանովի «Քրիստոսութիւն մեր քն-
նադատներուն» գրուած քէն) : Կատար-
եալ ձեռափոխման քանի որդիկը
հարսնեակի վերածուէն ետքը մաս-
նաւոր թաղանթով մը կը ձած կուրի,
որ կը պաշտպանէ զանի արտաքին
այխարհի աննպաստ ազդեցութիւն-
ներէն : Երբոր հարսնեակի օրկանիւր-
մին մէջ փոփոխման շրջանը կատա-
րելապէս կատարուի, այս զգուշացու-
ցիւ թաղանթը աւելորդ կըլլայ : ա-
նիկայ արգելք կը դառնայ օրկանիւր-
մին յետագայ կենսական պաշտօնա-
վարութեան, կը հսկանք անոր,
այս պատճառով երբոր հակաուժիւ-
նը որոշ ուժգնութեան սը կը հասնի
թաղանթը կը պատռի : Ըսել է հոս
տեղի կուենայ յեղափոխական պայ-
թում, աստիճանաւոր գարգացման
ընդհատում, ոստում, յեղափոխու-
թիւն :

Ահա ուրիշ հարածանօթ օրինակ
մը, որ բացայայտ կը ցուցնէ թէ
բնութեան մէջ գոյութիւն ունին
ոստումներ, յեղափոխութիւններ :
Ասիկա ընել մեզի պէտք է յատկա-
պէս ցուցնելու համար թէ Յիլիպէի
ձիթեանի փոխարկում, որուն միջակայ-
քէն ծնաւ Պիտո, բանիմաստ բաները
կը տեսնար եւ սոչ բնաւ յեղափո-

խութիւնն Ղարիպին առաջին յօդ-
ուածին մէջ մեզմէ բնաբանուած տո-
ղբուն մէջ : Ասիկա կրկին անգամ
կը հաստատէ մեր միտքը թէ մեր
յեղափոխականներէն շատեր, մանա-
ւանդ Ֆիլիպէիները, չեն գիտեր յե-
ղափոխութեան ինչ ըլլալը : Թէպէտ
եւ ամէն օր կը պոռան կը կանչեն
անոր մասին, եւ ալ աւելի քիչ կը
հասկնան Ղարիպ մը, ճշմարիտ յեղա-
փոխական մը, որ հիանալի ու գե-
ղեցիկ տողերով կերպէ յեղափոխու-
թիւնը ինչպէս կէօթէ բանաստեղծական
ձեռով կերպէր բուրգուաղիայի յեղափո-
խութիւնը «Յանուս» իմէջ, Այնպէս որ
մեր «Երբորք գասակարգի» զաւակ-
ները չեն գրնար դեռ իրենց արտա-
յայտիչները ըմբռնել : Է՛, ասոր վը-
րայ մի սրտմտիք երբ կը նկատենք
թէ յեղափոխութիւնը չհասկցողներ
կան :

Գանք մեր օրինակին : Ասիկա ծը-
նելու աքտն է. նոյն ինքն ծնելու
աքտն անտարակոյս ստուած է, ա-
րագ բարեփոխում մը երեխային վի-
ճակին մէջ, Երեխան, որ մօրը օր-
գանիւրմին մէկ մասը կը ներկայացնէ,
որ մասնակից է մօրը քաղաքային,
շարժումներուն, սննդաուժեան,
արեան շրջման, շնչաուժեան, ընդ-
հանրապէս երեխան, որ վերոյիշուած
— ու ուրիշ շատ — յատկութիւնները
չունի, յանկարծական կերպով, սո-
սիալականութեան ընդհատումով,
ոստումով, որ անուշա երկունք կը
պատճառէ, անկախ էակ մը կըլլայ
իր սեփական շարժումներով, սննդա-
ուժեան, արեան շրջմամբ եւ այլն :
Հոս իսկական յեղափոխութիւն մըն
է որ կըլլայ, ինչպէս որ ժամանակա-
կից Ֆրանսական պորժումաղիւս
1789ին գրաւեց բոլոր իրաւունքներն
ու մենաշնորհումները, տէրութեան
իրաւաբանական, քաղաքական ու
տնտեսական ուժը, իր սեփական օ-
րէնսգրութեամբ, իր ծերակոյտով,
իր վարչութեամբ, իր ոստիկանու-
թեամբ, իր բանակով եւն : Աւելին
կայ. ծնելու աքտին ու յեղափոխու-
թեան մէջ կայ աւելի մեծ նմանու-
թիւն : Եթէ ծնելիք տղուն գործա-
րանները չը զարգանան, դանդաղ
աստիճանաբար չը յեղաշրջին, լաւ
չհասունանաւ ու չհասնին զարգացման
այն աստիճանը երբոր տղան կրնայ
անկախ կատարուել իր, եթէ ոստու-
մը ասկէ առաջ ըլլայ, այն ատեն ծը-
նիլը նոր կեանքով չպատկուելի, այլ
մասամբ, Ասիկա կը պատահի երբոր
երեխան բաւական ատեն չկենար մօ-
րը արդանադին մէջ ու զարգացման
բարձր աստիճանին չհասնի (ինչպի-
սի են վիճման պարագաները), որուն
հետեւանք չըլլար նոր կեանքի սկզբ-
նաւորութիւն : սոչ նոր պաշտօնա-
վարութիւն, գործարաններու, այլ ա-
մէն պաշտօնավարութեան դադարում
— մահ ծնունդին ու նոյնպէս քաջա-
յայտ է թէ գործարաններու զանազ
զարգացումը «մօր արգանդին մէջ
կրնայ երկար տեւել, բայց իրենց
նոր պաշտօնները բնաւ չպիտի կր-
նան կատարել առանց ծնման յեղա-
փոխական աքտին : Գործարաններու
զարգացման որոշ աստիճանին վրայ
ծնման յեղափոխական աքտը ան-
խուսափելի կըլլայ :

(Շարունակելի)

ՆԱՍԱԿ ԽՍՐԱԳՐՈՒԹԵԱՆ (')

Քանի մը խօսք առ պարոն Յ. որ երեւցաւ 25 թիւ «Իրաւունք»-ի մէջ. պարոն, ով ըլլալէ չեմ գիտեր Յ. թէ Գ. ով որ ալ ըլլաւ զիտցիլ թէ այն շնորհակալութեան նամակովս կատարած եմ միայն պարտք մը, որ ամէն անկեղծ ազգային պարտաւոր է. չէ թէ ինծի վիճաբանութեան դուռ բանալ, քանզի լաւ գիտեմ թէ մի քանի տարիէ ի վեր քաղաքս շատ խօսող և շատ գրողներ կը վիտան թող անոնց մնայ հրապարակը. մենք ունինք մեր զբաղումները. ուստի կը յայտարարեմ ձեզ թէ քանի որ խրատատուի հանդամանքը ունիք, խրատեցէք ձեր բարձր գիրքի մէջ տեսած հրապարակագիրները, որք իրարու հետ վիճաբանած ժամանակ փողոցային ստորին անակներով իրար գրոշմելու սեղ քիչ մը համեստութեամբ և քաղաքավարութեամբ վարուին, նամանաւանդ պաշտօնական մարմնայն հետ, որ ազգայնաց բացարձակ քուէով ընտրուած է, նորա ուղեւալը և է անվայել խօսքերը ուղղապէս ընտրողները կը վիրատորեն, որ թէ ազգայնութեան թէ համեստութեան և թէ քաղաքավարութեան հակառակ է, մինակ լրագիր է ըսելով խուճկ ծխելու ստորնութիւնը ամէն մարդ չընդունիր. 40 տարի է ի վեր կընթեանում լրագիրներ, որոնք որ կոշիկէն վեր ելած են ըսելով լրագրագետ եմ, կըսեմ՝ կը գըրեմ, և այլն... Ուստի առանց պատասխանի ձգելով, ձեր մեծասրտութիւնը չվիրաւորելու համար այսչափ միայն պատասխանեմ, միանգամայն խնդրելով թէ գրած պատասխանիդ հանգարտ սրտով անգամ մը աչքե անցունելով ինծի ակնարկեալ անճոռնի անակները «չողովաւորար, պնակալէզ ցնդած» խօսքերը լու տրամաբանելով ուղեցէք ուր որ անկէ, և եթէ հրապարակ գալու արիւթիւնը ունիք վերցուցէք ձեր գիմակը:

Յարգանք
Մ. Հայրապետեան
Օրինակ մըն ալ «Իրաւունք»-ին զրկած եմ:

նոյն
(') Այս նամակը կը հրատարակենք առանց սրբագրելու:

ՊԱՏ. ԽՈՐԱ. «ՆԱՐԺՈՒՄ» ԼՐԱԳՐԻ
Կը յայտարարեմ բոլոր հետաքրքրուողներուն թէ վերջերս քանի մը գիւղերու մէջ բարեկամներէս ինչպատ Հ. Յ. Գաշնակցութեան հանգանակած գրամս ամբողջութեամբ յանձնած եմ վառնայի գոշն կոմիտէին և փո-

խարէն շատ աստուգադիր իրենց տեղերը խրկած եմ, արգէն «Իրաւունք»-ի մէջ ալ ժամանակին պիտի հրատարակուի անշուշտ:

Արդ եթէ նուիրատուներու մէջ այս մասին գիտողութիւն ընելու պէտք զգացողներ կան թող հաճին հարկ եղած տեղը դիմել:

Գալուս Մարտի ունեւն (Սոսկալի)
12 ապր. 1903
Վառնա

ՎՐԻՊԱԿ

«Շարժում»-ի 502 և 503 թիւերուն մէջ հրատարակուած Մանկավարժական յօդուածին մէջ սպրդած են տպագրական սխալներ, որոնցմէ կարեւորները պէտք է ուղղել այսպէս.
1) առաջին պարագային գործը «ճիշտ» է— առաջին պարագային գործը «հեշտ» է: 2) «հաց»— պատասխանի գրութեամբ— «հարց»— պատասխանի գրութեամբ: 3) «դրալ» պոյններով— «վառ» գոյներով: 4) «Շուշքէն» մինչև— «Շուշքէն» մինչև: 5) «ժող. տ. գպրոցին մէջ ձկաբանգուէր» ու է օտար լեզու— «շաւառագուիր» ու է օտար լեզու:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«ՄՇԱԿ»-էն կը անդակունանք թէ Շուշքի պ. Լեւոն Աթաբեգեան Յիւրիխի համալսարանին բժշկութեան սօքթօրի տիտղոսը ստանալու համար գիտական հետաքրքիր շարագրութիւն մը ներկայացուցած և առաջին կարգի վկայականի արժանացած է: Յիւրիխի որժշկական ընկերութիւնը իր վերջին գիտական նիստերէն մէկը նուիրած է հայ գիտնականի արտօյայտած մըտքերուն ծանօթանալու և պ. Լ. Աթաբեգեան յաջողութեամբ պաշտպանելով իր յայտնած կարծիքները՝ արժանացեր է ընկերութեան հաւանութեան և Համալսարանի բժշկական մասին ուսուցչապետներէն մէկը առաջարկեր է պ. Լ. Աթաբեգեանին «Ասիասէնթի» պատուաւոր պաշտօնը իր քով, բայց պ. Աթաբեգեան փափաքելով իր հայրենակիցներուն ծառայել իրբու բժիշկ մերժեր է իր յարգելի բրօթէսօրին առաջարկը:

Պ. Լեւոն Աթաբեգեան հօրեղբօրորդին է Տօրթօր Աղէքսանգր Աթաբեգեանին, որ զեռ երկու տարի առաջ Վառնա կը գտնուէր իրբու բժիշկ այնքան օգտակար ըլլալով տեղաւորակ հայերուն, մանաւանդ ազատ դասակարգին

և որ այնքան անուշ յիշատակ մը թողոյց իր հեռանալէն ետքը: — Կիմանանք թէ Վառնայի «Գողթան» երգեցիկ խումբը միւս շաբթու մէջ Նուագահանգէս մը պիտի տայ ինչպատ Սզգ. երկուսն վարժարաններու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Աւարիոյ և Ռուսիոյ գիտականները Մէլամըքի օրը Սուլթանին ներկայացներ են, բուն Կիմով մը ընելով ալպանական ասպտամբութեան անձիշական զսպու մին. բարենորոգումներու գործադրութեան մասին:

Գեսպանները Սուլթանին յանձնեցին մէյմէկ գրութիւն զորս իրենց կառավարութիւնները ընդունած էին: Սուլթանը յետոյ ընդունեց նաեւ Գերմանիոյ գործակատարը որ նոյնօրինակ գիմումներ ըրաւ:

Ասիկա կը յայտնէ թէ Մակեդոնիոյ կացութիւնը շատ ծանր է և թէ Սուլթանը ալպանացիներուն գէմ իսկոյն միջոցներ պիտի ձեռք առնէ:
Միեւնոյն որք Սուլթանին ներկայացեր է նաեւ Իտալիոյ գեսպանը իր պաշտօնակիցներուն ուժ տալու համար:

— Ռուսիոյ և Աւստրիոյ գեսպանները Մեծ Եպարքօսին զրկեր են Սուլթանին իրենց ըրած գիմումներուն գրաւոր պատճէնը: Այս գիմումները խիստ են բայց ու է սպառնալիք չեն պարունակեր:

— Զինուորական յանձնախումբը, ալպանացիներու շագտամբութիւնը զսպելու և մակեդոնական խումբերը հայածելու միջոցներ գտնելու համար Երլուզի մէջ երկու օր և երկու գիշեր շարունակ ժողով ըրեր է և իր որոշումները հեռագրով հաղորդեր է Իսկուպի քննիչին:

Այն տեսակ կարգադրութիւններ եղեր է որ կը կարծուի թէ մակեդոնական ասպտամբ խումբերը շատ դժուարութեամբ պիտի կարողանան այսուհետեւ ազատիլ զինուորներու հետապնդումէն: Այս հետապնդումը խստութեամբ ու անգթօրէն պիտի կատարուի: Նոյն միջոցները կը յուսացուին որ ալպանացիներուն համար ալ պիտի գործադրուին թուրքիոյ ամենէն մեծ դժուարութիւն պատճառող գրամի պակասն է, որ զգալի կըլլայ ստիպուած ըլլալով պատերազմի պատրաստ պահել բարձրագոյն զօրքեր, զանոնք փոխադրել և կերակրել: Այս բոլորը ահագին ծախքի դուռեր բացած են և չը գիտցուի թէ Սուլթանը որ սուր-

բին ստքը պիտի իյնայ գրամ ճարելու համար:

— Մակեդոնիոյ բոլոր կէտերէն ընդհարումներու լուրեր կը հասնին որոնք տեղի ունեցած են պուլկար խումբերու և թուրք զօրքերու միջեւ, որոնց նմանը մինչև հիմա չէ պատահած, ասոնց մէջէն կարեւորն է Սաէֆի ընդհարումը:

— Էօմէր Ռիւշտի փաշան Իւսկիւպ պիտի երթայ վերջին անգամ համոզելու ալպանացիները և ազատելու համար կանխազրկուած յանձնախումբը զոր ալպանացիները իրբու գերի պահած են:

ՄԱԿԵՂՈՆԻԱ

Մակեդոնական ասպտամբութեան մին՝ Սաէֆ պաշանուած է թուրքերէն շնորհիւ պուլկար մասնիչներու, որոնք նսխիկ յեղափոխականներ եղած են. մասնիչները անմիջապէս վազած ու զօրքեր բերած են. Սաէֆի հրոսախումբը զօրքերէն պաշարուած ու մեծ ընդհարում մը սեղիլ ունեցած է իրենց և թուրք զօրքերու միջեւ. խումբը մուլթին մէջէն անյայտացած է երկու սպաննուած յեղափոխականներ թողլով: Սաէֆը միայն 28 ժամ ապրած է. և մեռած ատենը վերջին խօսքերը ասոնքն էին.
«Մի թողուք զիս թուրքերու ձեռքը. ես պիտի մեռնիմ բայց գուք հաստատ կերպով շարունակեցէք կռիւը... կը նախազգամ արիւնալի Մակեդոնիոյ շուտափոյթ ազատութիւնը... կը տեսնեմ զայն...»

ՊԱՏԿԵՂԱԶԱՐԳ

ՎԱԶԿԵՂՈՆԻԱ — ԵՐԿՈՒՄԻՆ
Բանաստեղծութեանց, ազգային, յեղափոխական, փողովորական և սիրային երգերու այս ճոխ հաւաքածոն մինչև հիմայ նմանօրինակ հրատարակութեանց ամէնքը կը գերազանցէ:

Բազկայած է 600 մեծագիր երեսներէ. զարգարուած է ընտիր թուղթի վրայ տպուած հայ նշանաւոր դէմքերու գեղեցիկ պատկերներով:

Քանի մը անձերու անհատական ջանքերով Ամբրիկայի մէջ լոյս տեսած այս կարեւոր հրատարակութեան ամբողջ հատոյթը, յատկացուած է զուտ բարեգործական գործի մը: Կարժէ որ ամէն հայ ունենայ այս գիրքէն հատ մը իր տան մէջ:

Պուլկարիոյ համար մասնաւոր գեղջ եղած է և կը վաճառուի համեմատաբար աման գինով, ոսկեղրամ 5 ֆրանքի: Փօստի ծախքը գնողը կը վճարէ:
Գնել փափաքողները կրնան գիմել Կ. ՊԻՈՆՍՍԵՆԻ, ուսուցիչ ի Ֆիլիպէ:

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница «Взаимность», Варна